

**«ՆայՌ-ուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերության
կողմից բնական գազի բաշխման լիցենզավորված
գործունեություն իրականացնելու**

Պայմանները

**(Լիցենզիա № 0109, տրված Նայաստրանի Նանրապետության
բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի
2003 թ. սեպտեմբերի 22-ի № 56 Ա որոշմամբ)**

1. Լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացությունները

Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

Լիցենզիա՝ Նանձնաժողովի կողմից «ՆայՌ-ուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերությանը տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է վերջինիս իրավունքը և պարտականությունը սույն լիցենզիայով սահմանված պայմաններով իրականացնելու բնական գազի բաշխման գործունեություն.

Լիցենզավորված անձ՝ «ՆայՌ-ուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերություն.

Նամակարգի օպերատոր՝ գազամատակարարման համակարգի օպերատորի գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Նանձնաժողով՝ Նայաստրանի Նանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողով.

Ներդրումներ՝ Նանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներ, որոնք ուղղված են լիցենզավորված գործունեության համար օգտակար և օգտագործվող ակտիվների ավելացմանը.

Ներկրող՝ Նայաստրանի Նանրապետություն բնական գազի ներկրման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Փոխադրող՝ բնական գազի փոխադրման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Ճորս մատրո՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք սրեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտրահողմերը, նաև սաքոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, սպատամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2.Լիցենզիայի գործողության ժամկետը

- 2.1 Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2003 թվականի սեպտեմբերի 29-ից:
- 2.2 Լիցենզիան տրվում է երկու տարի գործողության ժամկետով:

3.Լիցենզավորված գործունեություն իրականացնելու տարածքը

- 3.1 Լիցենզավորված անձին իրավունք է տրվում իրականացնելու բնական գազի բաշխման գործունեություն Նայաստանի Նանրապետության ողջ տարածքում:

4. Լիցենզավորված գործունեության էությունը կազմող գործառույթները

- 4.1 Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին բացառիկ իրավունք է տրվում և պարտավորեցվում է Փոխադրողից և (կամ) Ներկրողից ընդունել բնական գազ և այն Նայաստանի Նանրապետության ողջ տարածքում բաշխել սպառողներին, ինչպես նաև Նանձնաժողովի կողմից սահմանված կարգով գնել և վաճառել բնական գազ: Բացառություն կարող են կազմել Լիցենզիայի 4.4 կետով սահմանված դեպքերը:
- 4.2 Լիցենզիայի 3.1 կետում նշված տարածքում բնական գազի պահանջարկը բավարարելու նպատակով Լիցենզավորված անձը պարտավոր է ընդլայնել բաշխիչ ցանցը և սպասարկել նոր սպառողներին:
- 4.3 Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել բաշխման ցանցի օպերատիվ տեխնոլոգիական կարգավարումը:
- 4.4 Նայաստանի Նանրապետության անվտանգության ապահովման համար կարևոր պաշտպանական նշանակություն ունեցող ռազմական օբյեկտների համար Նանձնաժողովի կողմից կարող են նախատեսվել բնական գազով սնման կազմակերպման առանձին տարբերակներ: Այդպիսի օբյեկտների ցանկը հաստատում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը:

5.Լիցենզավորված գործունեության պայմանները

- 5.1 Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի, Լիցենզիայի, Նայաստանի Նանրապետության օրենսդրության և Նանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջներին:
- 5.2 Առանց Նանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք կամ պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել, գրավադրել կամ փոխանցել մեկ այլ անձի:
- 5.3 Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համարել, այդ թվում՝ համարել գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:
- 5.4 Լիցենզավորված անձն առանց Նանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր կամ միավորվել լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

- 5.5 Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 փոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերերը կամ փայտերը առանց Նանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել Լիցենզավորված անձի կամ էներգետիկայի բնագավառում մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 փոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայտամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 փոկոս և ավելի բաժնետոմսեր:
- 5.6 Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, էներգակայանքներ) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար Լիցենզավորված անձը դիմում է Նանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով: Սույն կետում նշված որևէ հիմքով Նանձնաժողովը դիմելու դեպքում Նանձնաժողովը համապատասխան որոշում է կայացնում 60 օրվա ընթացքում:
- 5.7 Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության փակ գրնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:
- 5.8 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Նայաստանի Նանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:
- 5.9 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, կառույցների և էներգակայանքների մատչելիությունը Նանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:
- 5.10 Լիցենզավորված անձը պարտավոր է բնակչությանը իրագրել պահել անվտանգության տեխնիկայի կանոններին, այլ նորմերով սահմանված կողմերի իրավունքներին և պարտականություններին, որոնք առնչվում են Լիցենզիային և Լիցենզավորված անձի ու սպառողների միջև կնքված գազամատակարարման պայմանագրերին:
- 5.11 Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողովի կողմից հաստատված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Նանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից և ներառվում սակագնում:
- 5.12 Լիցենզավորված անձը, ներդրումներ կատարելու մրադրության դեպքում, պարտավոր է Նանձնաժողովի կողմից սահմանված կարգով Նանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել զարգացման ներդրումային ծրագրերը՝ սակագնում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:
- 5.13 Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողովի հաստատմանը ներկայացնել բաշխիչ ցանցում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, սեփական կարիքների համար օգտագործվող էներգիայի, բնական գազի և սակագնի փարթ կազմող այլ մեծությունների հաշվարկման մեթոդիկաները:
- 5.14 Լիցենզավորված անձը, Նանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություն է ներկայացնում Նանձնաժողով:
- 5.15 Լիցենզավորված անձի կողմից Նանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին, որը գերակա է հրապարակման հասարակական շահից: Նանձնաժողովն իրավասու է ընդունել

կամ մերժել նման տեղեկատվության չհրատարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

- 5.16 Լիցենզավորված անձը պարասխանատվություն է կրում Նանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:
- 5.17 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Նայաստանի Նանրապետության օրենսդրության և Նանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:
- 5.18 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:
- 5.19 Յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 30-ը, Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողովի կողմից սահմանված ձևերին համապատասխան մամուլում հրատարակել նախորդ տարվա իր ֆինանսատնայնագրական գործունեության հաշվետվությունը:
- 5.20 Յուրաքանչյուր տարի Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր ֆինանսատնայնագրական գործունեության աուդիտ և աուդիտորական եզրակացության պարզնել ներկայացնել Նանձնաժողով: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից և ներառվում սակագնում:
- 5.21 Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը):
- 5.22 Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձը, Նանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, կարող է հայտ ներկայացնել գործող սակագնի վերանայման վերաբերյալ:
Նանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր կողմից սահմանված կարգով կարող է վերանայել գործող սակագինը: Սահմանված սակագինն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելուց 30 օր հետո: Սակագնի գործողության ժամկետը 6 ամսից պակաս չի կարող լինել, բացառությամբ այն դեպքերի, երբ Լիցենզավորված անձը խախտում է Լիցենզիայի պայմանները:
- 5.23 Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեության հետ կապված ծախսերն իրականացնում է ըստ սակագնի մեջ ընդգրկված ծախսերի համապատասխան հոդվածների (ուղղությունների): Ծախսերի ուղղությունների փոփոխության անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը նախապես համապատասխան հիմնավորումներ է ներկայացնում Նանձնաժողով:
- 5.24 Նանձնաժողովը սակագնի հաշվարկներում հաշվի է առնում միայն լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը:
- 5.25 Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց, Լիցենզավորված անձի և սպառողների միջև կնքված պայմանագրերը պետք է համապատասխանեն Նանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին:
- 5.26 Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված պայմանագրերը ուժի մեջ են մտնում Նանձնաժողովում սահմանված կարգով գրանցվելու պահից:
- 5.27 Լիցենզավորված անձը պարտավոր է «Էներգետիկայի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքին, Նայաստանի Նանրապետությունում գործող տեխնիկական

կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան կատարել Նամակարգի օպերատորի հրահանգները (կարգադրությունները):

- 5.28 Լիցենզավորված անձը պարտավոր է Նայաստանի Նանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ աջակցել Նամակարգի օպերատորի կողմից իրականացվող գազամատակարարման համակարգի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող՝ Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ:
- 5.29 Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ իր կողմից բաշխվող և ներքին սպառման հաշվեկշռի մեջ հաշվառվող բնական գազի ծավալների նվազեցմանը հանգեցնող միջոցառումների պլանները Լիցենզավորված անձը պետք է համաձայնեցնի Նանձնաժողովի և Նամակարգի օպերատորի հետ ոչ պակաս, քան միջոցառումներն սկսելուց 12 ամիս առաջ:
- 5.30 Լիցենզավորված անձը պարտավոր է Նամակարգի օպերատորի հետ համաձայնեցնել իր հիմնական սարքավորումների հաջորդ փարվա նորոգումների ժամանակացույցը:
- 5.31 Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական (ձեռնարկատիրական) այլ գործունեությունը չպետք է վրանգի Լիցենզիայի պայմանների պարզաճ կատարումը:
- 5.32 Լիցենզավորված անձը բանկային հաշիվներ բացելու, տեղափոխելու կամ համանման այլ փոփոխություններ իրականացնելու դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնում է Նանձնաժողովին:
- 5.33 Լիցենզավորված անձը պարտավոր է բոլոր գնումները, ներառյալ՝ ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը, իրականացնել գնումների իրականացման կարգին համապատասխան, որը Լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Լիցենզավորված անձի ներկայացմամբ հաստատում է Նանձնաժողովը:
- 5.34 Նանձնաժողովի կողմից սակագնում ներդրային համակարգի սպասարկման համար ֆինանսական միջոցների ներառման դեպքում, Լիցենզավորված անձը պարտավոր է բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով և պայմանագրով սահմանված կարգով ապահովել կենցաղային սպառման համար բնական գազ սպառողների ներդրային համակարգի սպասարկումը՝ իր միջոցների հաշվին:
- 5.35 Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

6.Լիցենզավորված գործունեության վերահսկում

- 6.1 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Նանձնաժողովը:
- 6.2 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Նանձնաժողովի և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պետք է համագործակցի Նանձնաժողովի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչների հետ և աջակցի նրանց:
- 6.3 Նանձնաժողովի լիազորած ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, ինչպես նաև Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

- 6.4 Նանձնաժողովը, փոշյակ պահելով Լիցենզավորված անձին, Նայասպանի Նանրապետության օրենքներին համապատասխան, իր սահմանած կարգով և ժամկետներում, բայց ոչ հաճախ, քան փարին մեկ անգամ, իր կողմից ընտրված անկախ փորձագիտական ընկերության կամ անկախ փորձագետների միջոցով կարող է իրականացնել Լիցենզիայի պայմանների կատարման ուսումնասիրություն և Նանձնաժողով ներկայացված հաշվետվությունների հավաստիության ստուգում: Ուսումնասիրության և ստուգման ծախսերը ներառվում են Լիցենզավորված անձի սակագնում: Լիցենզավորված անձի սակագնով այդ ծախսերի փոխհատուցումը կարող է լրիվ կամ մասնակիորեն չիրականացվել, եթե ուսումնասիրության կամ ստուգման արդյունքում հայտնաբերվել է, որ Լիցենզավորված անձը սխալ փյալներ է ներկայացրել Նանձնաժողով կամ Նանձնաժողովից փյալներ է թաքցրել:

7. Տուգանքներ, Լիցենզիայի կասեցում և Լիցենզիայից զրկում

- 7.1 «Էներգետիկայի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի պահանջները խախտելու, Նանձնաժողովի իրավական ակտերը և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պարզաձև կատարելու կամ խախտելու դեպքերում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքով, Նանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ փույժերը.

- ա) նախազգուշացում,
- բ) սակագնի նվազեցում,
- գ) Լիցենզիայի կասեցում,
- դ) Լիցենզիայից զրկում:

Նշված փույժերի կիրառման կարգը սահմանում է Նանձնաժողովը:

- 7.2 Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Նանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքով, Նայասպանի Նանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով:
- 7.3 Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել նաև Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Նանձնաժողովի կողմից համապատասխան որոշման կայացումը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել լիցենզավորված գործունեությունը՝ համաձայն Լիցենզիայի պայմանների:
- 7.4 Լիցենզավորված անձը չի ենթարկվում պարասխանափութության՝ Լիցենզիայի 7.1 կետով սահմանված կարգով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆոբս մաժորի հետևանք են:

8. Լիցենզիայի պայմանների փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Լիցենզիայի կորստի դեպքում Լիցենզիայի կրկնօրինակի տրամադրում

- 8.1 Լիցենզիայում փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի կամ Նանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Նանձնաժողովի կողմից սահմանված կարգով:
- 8.2 Նանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Նայասպանի Նանրապետության օրենքների պարզաձև կատարումն ապահովելու համար:
- 8.3 Նանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայում կատարված փոփոխությունների հետևանքով առաջացած Լիցենզավորված անձի հիմնավորված՝ լրացուցիչ ծախսերը և (կամ) իրական վնասները փոխհատուցվում են Լիցենզավորված անձի սակագնով:

- 8.4 Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գրնվելու վայրի (հասցեի) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15-օրյա ժամկետում Նանձնաժողովի կողմից սահմանված կարգով հայտ ներկայացնել Լիցենզիայի վերաձևակերպման համար:
- 8.5 Լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում Նանձնաժողովին ծանուցագրով տեղեկացնում է իր հիմնադիր փաստաթղթերում և բանկային հաշվեհամարներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:
- 8.6 Լիցենզիայի կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Նանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով: Լիցենզիայի կրկնօրինակի ստացման և (կամ) ժամկետի երկարաձգման ընթացակարգերը կարգավորվում են Նանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտով:

9. Այլ պայմաններ

- 9.1 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել իր գործունեության թափանցիկությունը: Լիցենզավորված անձը պարտավոր է լիցենզավորված գործունեության առնչությամբ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց և (կամ) շահագրգիռ կողմերի հարցման դեպքում նրանց տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկատվությունը համարվում է գաղտնի:

10. Ծանուցում

- 10.1 Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ տեղեկությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով՝ պահանջելով ստացական: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ է համարվում ստացման պահից:

Լիցենզավորված անձի փոստային կարգաթիվը _____ 375094 _____

Նասցեն _____ Նայասպանի Նանրապետություն, ք. Երևան Թբիլիսյան խճուղի 43 _____

Անվանումը _____ «ՆայՌուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերություն _____

Տնօրենի (նախագահի) անունը, ազգանունը: _____ Կարեն Կարապետյան _____

Ի վկայություն սույնի, Նայասպանի Նանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը Լիցենզիան տրամադրել է

«ՆայՌուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերություն

(ընկերության անվանումը)

Նայասպանի Նանրապետություն, ք. Երևան Թբիլիսյան խճուղի 43

(գտնվելու վայրը)

Գրանցման ամսաթիվը

« 22 » սեպտեմբերի 2003 թ.

Գրանցման համարը

№ _____ 0109 _____

Նանձնաժողովի պարասխանաբու անձ՝ _____ Ա.Վարդանյան